# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)700314, tsaghkahovit.aragatsotn@mta.go

## Ո Ր Ո Շ Ու Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N 08

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

### ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՇԽԱՏԱՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին '' ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի 28-ի նիստի ,,Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ շենքերով ,,Տարածքների, այդ թվում միասնական ընդունարանների տեղակայման վայրերին և պայմաններին հավանություն տալու մասին'' թիվ 25 որոշումը .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Ի լրումն Ծաղկահովիտ համայնքի ավագանու 12.11.2012թ. թիվ 1 որոշման 3-րդ կետի Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը 479,2քմ ընդհանուր մակերեսով անհատույց , անժամկետ օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին.

Ելնելով խիստ անհրաժեշտությունից վերը նշված տարածքին ավելացնել ևս 229,25քմ տարածք, արդյունքում 708,45քմ ընդհանուր մակերեսով տարածք:

2. Հանձնարարել Ծաղկահովիտ համայնքի ղեկավար ՝ Ե. Խաչատրյանին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարության հետ կնքել լրացուցիչ ևս 229,21քմ մակերեսով տարածքի անհատույց, անժամկետ օգտագործման պայմանագիր:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԵՍԱԼՅԱՆ ՎԱՀՐԱՄ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐԱՄ
4. ՊՈՂՈՍՅԱՆ ՍԱՆԱՍԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԵՐՎԱՆԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ ԳՐԻԳՈՐ ԱՍԼԱՆՅԱՆԸ